ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՌՈՄՈՒՄ

Հունվարի 24-31-ը Հռոմում գումարվել է Կաթոլիկ Եկեղեցու և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև Ապրվածաբանական երկխոսության համապեղ միջազգային հանձնախմբի հանդիպումը:

Ժողովը, որ նախագահում են Հռոմի Քրիստոնեական Միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերը և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Դամիեթեի մետրոպոլիտ Ամբա Բիշոյը, քննարկում է երկխոսության հինգ փարիների արդյունքում ստեղծված «Եկեղեցու բնույթը, սահմանադրությունը և առաքելությունը» խորագրով փաստաթուղթը: Հանձնախումը որոշելու է երկխոսության հետագա ընթացքը:

Ժողովին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից Գերաշնորհ Տ. Օշական արքեպս. Չոլոյանը և Գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ